Հավելված 7[26]
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/57»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/57»

ք.Վանաձոր «30» 06 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Այպռշին» ՍՊԸ** -ն, ի դեմս տնօրեն՝ **Հովհաննես Պողոսյանի** -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Վանաձոր համայնքի Տարոն-2 թաղամասում պուրակի կառուցման աշխատանքների*** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 180 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

---

[26] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1460 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **22407000** (քսաներկու միլիոն չորս հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ, որից **3734500** (երեք միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր) **ՀՀ դրամը՝ ԱԱՀ** -ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 [34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան	«Այպոշին» ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ/Մեծի 24/52
Կենտրոնական գանձապետարան	Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Լոռի մ/ճ
ՀՀ 900232000779	ՀՎՀՀ՝ 06933045
ՀՎՀՀ 06901936	Հ/Հ՝ 220053335687000
----------Մ. Ասլանյան	Տնօրեն՝ ----------Հ. Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 30 » 06 20 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ -20/57» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		քանդման աշխատանքներ	-	-		
1	7-448 գ-2	ավտոտնակների բարձում ա/ինքնաթափին	հատ	3	10,098	30,29
2	Գ130-5	ավտոտնակների տեղափոխում մինչև 5կմ	տն	12,0	1,701	20,41
		ճեմուղու կառուցում	-	-		
1	1-1613 1-1619	4-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով տեղափոխելով մինչև 30մ	1000 մ³	0,015	471,741	7,08
2	1-1130	բնահողի հարթեցում մեխանիզմով	100մ²	26,685	1,529	40,81
3	1-1592	քարազրկված սևահողի բարձում էքսկավատորով ինքնաթափ մեքենաների վրա	1000 մ³	0,185	580,573	107,41
4	Գ130-7	ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 7կմ	տն	277,5	2,043	567,00
5	1-1635	քարազրկված սևահողի փռում սիզամարգերում մեխանիզմով	1000 մ³	0,200	88,703	17,74
6	1-1130	քարազրկված սևահողի հարթեցում մեխանիզմով սիզամարգերում	100մ²	17,40	1,529	26,61
7	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	40,40	2,755	111,31
8	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	40,40	1,147	46,33
9	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	2,075	651,573	1352,01
10	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	5,68	523,317	2969,83
11	27-87	բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	0,368	1128,575	415,32
12	1-1183	մայթի բնահողի խտացում մեխանիզմով	100մ²	9,284	6,420	59,60
13	5-67	մայթի հատվածում խճային նախաշերտ 8սմ հաստ. /928,4մ2/.	մ³	74,272	16,317	1211,93
14	11-11	մայթի հատվածում բետոնե նախաշերտ 8սմ հաստ. B-7,5մ.բ./928,4մ2/.	մ³	74,274	39,223	2913,28
15	5-111	ծածկույթների երեսապատում բազալտե սալիկների ջարդոնով ,,բրեկչա,,տիպի 3սմ հաստ.	մ²	928,4	4,761	4420,15
		կանաչապատում –Սիզամարգեր	-	-		
1	48-209	Թփերի տնկում 0,7*0,5մ ,18,3*0,8=14,64	100 թուփ	0,60	2,070	1,24
2	48-100	Ծառ- տնկիների տեղի նախապատրաստում ձեռքով 0,8*0,6մ	10 փոս	3,00	18,943	56,83
3	48-206	Ծառ-տնկիների տնկում ձեռքով 0,8*0,6մ	10 ծառ	3,00	22,093	66,28
4	48-226	Ծառ-տնկիների խնամում ձեռքով 0,8*0,6մ	10 ծառ	3,00	13,314	39,94
5	Ծ ուկա	թփերի արժեքը	հատ	60	1,538	92,27
6	Ծ ուկա	Ծառ-տնկիների արժեքը մինչև 0,6մ բարձր	հատ	30	9,227	276,81
		Մետաղական ցանկապատ	-	-		
1	1-961	մետաղական ցանկապատի սյուների կետային հիմքի բնահողի քանդում ձեռքով	մ³	12,30	2,755	33,89
2	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	12,30	1,147	14,11
3	6-2	բետոնե հիմքերի կառուցում նստարանների տակ B 7.5 բետոնով	մ³	12,300	47,636	585,92
4	9-122	Մետաղական ցանկապատի կառուցում	տն	3,8516	95,670	368,48
5	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 60x60x3	մ	59,80	2,980	178,22

6	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 40x40x3	մ	414,00	3,448	1427,41
7	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 20x20x2	մ	1555,4	0,627	975,92
8	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	2,0	126,416	252,83
9	Շուկա	ամրան Φ12 A500C	տն	0,0270	447,851	12,09
		<u>Պուրակային լուսավորություն</u>				
-		Պուրակային լուսավորություն պսակադիր լուսատուներով	-	-		
1	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ60x3 , L = 3,5մ Φ76x3 , L = 1,5մ	տն	0,27444	115,832	31,79
2	Շուկա	Պողպատե խողովակ Φ60x3	մ	42,0	2,768	116,26
3	Շուկա	Պողպատե պաշտպանիչ խողովակ Φ76x3	մ	18,0	3,076	55,36
4	8-364-1	բարձակ/կրոնշտեյն/ Φ 33x3մմ երկ. L = 1.0 մ պող. խողովակից 1 x 0.9=0,9	հատ	36	2,979	107,25
5	շուկա	տուփ բաժանարար Y994	հատ	12	0,308	3,69
6	14-415	Մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,18	123,954	22,31
7	8-619-4	պսակադիր պուրակային լուսատու d=400մմ ,Шар.,տիպի	հատ	36	10,084	363,03
8	Շուկա	LED տեսակի լամպ 30w 220v,E27	հատ	36	2,768	99,65
9	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2.5 մմ^2	մ	48,0	0,261	12,55
10	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	1,20	2,755	3,31
11	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	1,10	35,163	38,68
12	1-968	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	1,20	1,147	1,38
		Պուրակային լուսավորություն կոնսոլային լուսատուներով	-	-		
1	8-619-4	փողոցային կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրում LED 60w 220v,E27	հատ	8	26,231	209,85
2	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ102x3 , L = 7մ	տն	0,205	100,961	20,70
3	Շուկա	Պողպատե խողովակ Φ102x3	մ	28,0	4,181	117,08
4	շուկա	մետ. վրադիրների տեղադրում 3մմ հաստ. թերթից D=110մմ	մ^2	0,04	14,022	0,56
5	8-364-1	Բարձակ /կռանշտեյն /4 լրակազմ/ Φ 57x2.5մմ երկ. L = 1.5 մ պող. խողովակից 1.5 x 1.214 =1,821 /2 հատ/	հատ	8	4,395	35,16
6	շուկա	տուփ մետաղյա բաժանարար Y994	հատ	4	0,308	1,23
7	շուկա	խարիսխ պողպատե ձողից Φ12.մմ 4հատ	կգ	1,78	0,457	0,81
8	Շուկա	մալուխի պողպատե պաշտպանիչ խողովակ Φ33x3	մ	4,0	1,384	5,54
9	14-415	Մետաղական հենասյուների ներկում ալյումինե փոշիով 2 անգամ	100մ^2	0,12	87,057	10,45
10	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2.5 մմ^2	մ	40,0	0,261	10,46
11	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	0,64	2,755	1,76
12	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	0,60	34,639	20,78
13	1-968	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	0,64	1,147	0,73
		<u>Ստորգետնյա մալուխային գիծ 0.22կվս</u>				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով խրամուղում/գործող կոմունիկացիաներին զուգահեռ/	մ^3	61,10	4,851	296,40
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	20,10	1,147	23,05
3	1-968	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	մ^3	41,00	1,147	47,02
4	Գ130-3	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3կմ	տն	61,50	1,331	81,88
5	8-140-1	ավազի փռում մալուխի տակ	100մ	2,35	30,187	70,94
6	Շուկա	ավազի արժեքը 235x0.25x0.3=9մ3	մ^3	17,63	2,588	45,63
7	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ	100մ	2,132	22,383	47,72
8	8-141-1	ալյումինե մալուխի ձգում խրամուղում ՊՎՔ խողովակով 2x10 ԱՎՎԳ	100մ	0,306	22,383	6,85
9	8-150-4	Մալուխի ձգում 2x10 ԱՎՎԳ պաշտպանիչ խողովակով	մ	24,48	0,527	12,91
10	8-150-4	Մալուխի ձգում 2x10 ԱՎՎԳ խողովակով	մ	5,1	0,527	2,69
11	8-150-4	Մալուխի անցկացում օդով 2x10 ԱՎՎԳ	մ	10,4	0,527	5,48

12	Շուկա	ալյումինե մալուխի արժեքը 2x10 ԱՎՎԳ	մ	283,78	0,286	81,18
13	Շուկա	ՊՎՔ խողովակ Φ110մմ	մ	30,00	1,127	33,82
		Ընդամենը				*20745,29*
		ԱԱՀ 20%				*4149,06*
		Ընդամենը				*24894,35*

Ծավալաթերթերը ախահաշիվը կազմված է MS office exel ծրագրով:

Ծավալաթերթերում մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը 13.3%, շահույթը 11%, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը 0,5%, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը 0,45%, չնախատեսված ծախսերը 1,5%

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Վանաձոր, Տարոն-2,ՔՇՀ- 4 16 հասցեում: Աշխատանքներն իրականացնել հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Աշխատանքների իրականացման համար առկա է.

Լիցենզիա՝

քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) ըստ հետևյալ ոլորտի՝

- Բնակելի, հասարակական և արտադրական
- Էներգետիկ

Աշխատանքային ռեսուրսներ

ԱՔՇ ճարտարագետ, աշխղեկ-1 հոգի, 3 տարվա աշխատանքային փորձով
Վարպետ- 2 հոգի, 3 տարվա աշխատանքային փորձով
Վարպետ էլ. տեխնիկ-1 հոգի, 3 տարվա աշխատանքային փորձով
Բանվոր-3 հոգի

Տեխնիկական միջոցներ

Բեռնատար- 1 հատ, 10տ. բեռնատարությամբ,
Հետահար մուրճ- 2 հատ
Էքսկավատոր-1 հատ, մինչև 0.65մ^3 շերեփով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232000779
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ/Մեծի 24/52
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Լոռի մ/ճ
ՀՎՀՀ՝ 06933045
Հ/Հ՝ 220053335687000

Տնօրեն՝ ---------- Հ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Տարոն -2 թաղամասում պուրակի կառուցման

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		քանդման աշխատանքներ				
1	7-448 գ-2	ավտոտնակների բարձում ա/ինքնաթափին	հատ	3	4.000	12.00
2	Գ130-5	ավտոտնակների տեղափոխում մինչև 5կմ	տն	12.0	1.150	13.80
		ճեմուղու կառուցում				0.00
1	1-1613 1-1619	4-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով տեղափոխելով մինչև 30մ	1000 մ^3	0.015	793.800	11.91
2	1-1130	բնահողի հարթեցում մեխանիզմով	100մ^2	26.685	20.000	533.70
3	1-1592	քարազրկված սևահողի բարձում էքսկավատրով ինքնաթափ մեքենաների վրա	1000 մ^3	0.185	390.000	72.15
4	Գ130-7	ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 7կմ	տն	277.5	1.250	346.88
5	1-1635	քարազրկված սևահողի փռում սիզամարգերում մեխանիզմով	1000 մ^3	0.200	61.610	12.32
6	1-1130	քարազրկված սևահողի հարթեցում մեխանիզմով սիզամարգերում	100մ^2	17.40	20.000	348.00
7	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	40.40	1.500	60.60
8	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	40.40	1.300	52.52
9	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	2.075	600.000	1245.00
10	16-76	բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	5.68	450.000	2553.75
11	27-87	բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա	100 գծմ	0.368	750.000	276.00
12	1-1183	մայթի բնահողի խտացում մեխանիզմով	100մ^2	9.284	15.000	139.26
13	5-67	մայթի հատվածում խճային նախաշերտ 8սմ հաստ. /928,4մ2/.	մ^3	74.272	6.148	456.63
14	11-11	մայթի հատվածում բետոնե նախաշերտ 8սմ հաստ. B-7,5մ.բ./928,4մ2/.	մ^3	74.274	30.500	2265.36
15	5-111	ծածկույթների երեսապատում բազալտե սալիկների ջարդոնով ,,բրեկչա,,տիպի 3սմ հաստ.	մ^2	928.4	5.000	4642.00
		Կանաչապատում –Սիզամարգեր				0.00
1	48-209	Թփերի տնկում 0,7*0,5մ ,18,3*0,8=14,64	100 թուփ	0.60	20.500	12.30
2	48-100	Ծառ- տնկիների տեղի նախապատրաստում ձեռքով 0,8*0,6մ	10 փոս	3.00	5.500	16.50
3	48-206	Ծառ-տնկիների տնկում ձեռքով 0,8*0,6մ	10 ծառ	3.00	2.500	7.50
4	48-226	Ծառ-տնկիների խնամում ձեռքով 0,8*0,6մ	10 ծառ	3.00	3.000	9.00
5	Շուկա	թփերի արժեքը	հատ	60	0.500	30.00
6	Շուկա	Ծառ-տնկիների արժեքը մինչև 0,6մ բարձր	հատ	30	1.500	45.00
		Մետաղական ցանկապատ				0.00
1	1-961	մետաղական ցանկապատի սյուների կետային հիմքի բնահողի քանդում ձեռքով	մ^3	12.30	1.700	20.91
2	1-968	բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	12.30	1.300	15.99
3	6-2	բետոնե հիմքերի կառուցում նստարանների տակ B 7.5 բետոնով	մ^3	12.300	30.500	375.15

4	9-122	Մետաղական ցանկապատի կառուցում	տն	3.8516	160.000	616.26
5	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 60x60x3	մ	59.80	1.350	80.73
6	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 40x40x3	մ	414.00	0.900	372.60
7	Շուկա	պողպատե քառակուսի խողովակ 20x20x2	մ	1555.4	0.430	668.82
8	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	100մ^2	2.0	120.000	240.00
9	Շուկա	ամրան Φ12 A500C	տն	0.0270	370.000	9.99
		Պուրակային լուսավորություն				
		Պուրակային լուսավորություն պսակադիր լուսատուներով				
1	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ60x3 , L = 3,5մ Φ76x3, L = 1,5մ	տն	0.27444	67.160	18.43
2	Շուկա	Պողպատե խողովակ Φ60x3	մ	42.0	2.200	92.40
3	Շուկա	Պողպատե պաշտպանիչ խողովակ Φ76x3	մ	18.0	2.900	52.20
4	8-364-1	բարձակ/կրոնշտեյն/ Φ 33x3մմ երկ. L = 1.0 մ պող. խողովակից 1 x 0.9=0,9	հատ	36	1.000	36.00
5	շուկա	տուփ բաժանարար Y994	հատ	12	0.360	4.32
6	14-415	Մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.18	120.000	21.60
7	8-619-4	պսակադիր պուրակային լուսատու d=400մմ ,Ալբ,,տիպի	հատ	36	6.500	234.00
8	Շուկա	LED տեսակի լամպ 30w 220v,E27	հատ	36	1.500	54.00
9	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2.5 մմ^2	մ	48.0	0.150	7.20
10	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	1.20	1.500	1.80
11	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	1.10	30.500	33.55
12	1-968	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	1.20	1.300	1.56
		Պուրակային լուսավորություն կոնսոլային լուսատուներով				
1	8-619-4	փողոցային կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրում LED 60w 220v,E27	հատ	8	6.400	51.20
2	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ102x3 , L = 7մ	տն	0.205	67.160	13.77
3	Շուկա	Պողպատե խողովակ Φ102x3	մ	28.0	5.800	162.40
4	շուկա	մետ. վրադիրների տեղադրում 3մմ հաստ. թերթից D=110մմ	մ^2	0.04	5.900	0.24
5	8-364-1	Բարձակ /կռանշտեյն /4 լրակազմ/ Φ 57x2.5մմ երկ. L = 1.5 մ պող. խողովակից 1.5 x 1.214 =1,821 /2 հատ/	հատ	8	1.300	10.40
6	շուկա	տուփ մետաղյա բաժանարար Y994	հատ	4	0.360	1.44
7	շուկա	խարիսխ պողպատե ձողից Φ12.մմ 4հատ	կգ	1.78	0.370	0.66
8	Շուկա	մալուխի պողպատե պաշտպանիչ խողովակ Φ33x3	մ	4.0	0.900	3.60
9	14-415	Մետաղական հենասյուների ներկում ալյումինե փոշիով 2 անգամ	100մ^2	0.12	140.000	16.80
10	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2.5 մմ^2	մ	40.0	0.150	6.00
11	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	0.64	1.500	0.96
12	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	0.60	30.500	18.30
13	1-968	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	0.64	1.300	0.83
		Ստորգետնյա մալուխային գիծ 0.22կվա				

2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	20.10	1.300	26.13
3	1-968	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	մ³	41.00	1.300	53.30
4	Գ130-3	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3կմ	տն	61.50	0.900	55.35
5	8-140-1	ավազի փռում մալուխի տակ	100մ	2.35	15.000	35.25
6	Շուկա	ավազի արժեքը 235x0.25x0.3=9մ3	մ³	17.63	5.500	96.97
7	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ	100մ	2.132	5.000	10.66
8	8-141-1	ալյումինե մալուխի ձգում խրամուղում ՊՎՔ խողովակով 2x10 ԱՎՎԳ	100մ	0.306	5.000	1.53
9	8-150-4	Մալուխի ձգում 2x10 ԱՎՎԳ պաշտպանիչ խողովակով	մ	24.48	0.050	1.22
10	8-150-4	Մալուխի ձգում 2x10 ԱՎՎԳ խողովակով	մ	5.1	0.050	0.26
11	8-150-4	Մալուխի անցկացում օդով 2x10 ԱՎՎԳ	մ	10.4	0.050	0.52
12	Շուկա	ալյումինե մալուխի արժեքը 2x10 ԱՎՎԳ	մ	283.78	0.500	141.89
13	Շուկա	ՊՎՔ խողովակ Φ110մմ	մ	30.00	1.800	54.00
		Ընդամենը				*16975.000*
		Շահույթը 10%				*1697.500*
		Ընդամենը				*18672.500*
		ԱԱՀ 20%				*3734.500*
		Ընդամենը				*22407.000*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232000779
ՀՎՀՀ 06901936

_____Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Այպոշին>> ՍՊԸ
ՀՀ, Լոռու մ/զ, ք. Վանաձոր, Տ/Մեծի 24/52
Ակբա-կրեդիտ Ագրիկոլբանկ Լոռի մ/ճ
Հ/Հ՝ 220053335687000
ՀՎՀՀ 06933045

_____Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 30 » 06 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ -20/57» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« *ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ* »

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***«Վանաձոր համայնքի Տարոն-2 թաղամասում պուրակի կառուցման աշխատանքների ձեռքբերում»***	կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	180 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232000779
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ/Մեծի 24/52
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Լոռի մ/ճ
ՀՎՀՀ՝ 06933045
Հ/Հ՝ 220053335687000

Տնօրեն՝ ----------Հ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

«ԱՅՊՈՇԻՆ»
«АЙПОШИН»
«AYPOSH.N»
06933045

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված 3
«30» 06 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ -20/57» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231270/501	***«Վանաձոր համայնքի Տարոն-2 թաղամասում պուրակի կառուցման աշխատանքների ձեռքբերում»***	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232000779
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ/Մեծի 24/52
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Լոռի մ/ճ
ՀՎՀՀ՝ 06933045
Հ/Հ՝ 220053335687000

Տնօրեն՝ ----------Հ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«30» 06 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 30 » 06 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն